պարգևացն տուեցելոց։ Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել շնորհաւք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յորում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն։ Այլ և զԽաչատուր վարդապետ Կեչառուեցի յիշել աղաչեմ՝ որ յետոյ ժամանակի ստացայ զսա յիշատակ հոգւոյն։ Աստուած զնա յիշէ»։

«Այլ և ես լցեալս մեղաւք և անպտուղ ամենայն բարեաց։ յերես անկեալ պաղատիմ մանկանցդ եկեղեցւոյ՝ վարդապետ Թովմայ Մեծոփայ վանուց և աղերս մաղթանաց արկանեմ առաջի հմտականացդ և ընթերցողացդ յիշել զամենամեղս զԹովմա ի մաքրափայլ և հասողական յաղաւթս ձեր ընդ սմին և ծնողսն մեր զհոգևոր և զմարմնաւոր՝ որ ետ սա վերստին կազմել զգիրս զայս հոգևոր հաւր իմոյ Մաթէոս կրօնաւորի և Աստուած զձեզ յիշէ ամէն . . . ի թուականութեանս մեր ՊԿԸ կազմեցաւ ի փառս Աստուծոյ»։

ՆՈՅՆ ԳԻՒՂԸ ԶԵՌԱԳԻՐ ԱՒԵՏԱՐԱՆԻ ՄԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

«Ծառայիս Աստուծոյ Ատիլ շահին՝ Տավուտին՝ Մարիամին՝ Մուրատին՝ Շահզաիմին՝ հօրն մօրն Բահարին՝ Տարմանին՝ Սեփանոսին՝ Փառս ամենասուրբ Երրորդութեան Հայր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Արդ՝ գրեցաւ սա ի թուին հայոց ՋԼԸ ձեռամբ անարժան ծառայիս Աստուծոյ Կիրակոսի՝ յիշատակ է բժշկութեան ծառային Աստուծոյ Տայուտի և ամենայն մերձաւորաց իւրոց։»

«Աղաչեմք զամենեսեանսդ՝ որ հանդիպիք սմա՝ կարդալով տեսանելով կամ յաւրինակելով՝ Աստուած ողորմի ասացէք ինձ մեղաւոր գրչիս և որ զամէն ասէ՝ Աստուած ողորմի իւրն»։

Մի յիշատակարան ևս կայ որ կրսկսի «Յամին ինհարիւրերորդի՝ տասերորդի՝ ութերորդի ...» և սորա շարունակութիւնը որ յաջորդ թերթի վերայ պիտի անցնէր։ Նա ամբողջովին կտրուած հանուած է։